


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
 Ե. ՓՈՐՓՈՍԵԱՆ  
 Նամակ կամ որ եւ է  
 գրութիւն պէտք է ուղղել առ  
 Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ րազմի  
 ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՇԱՐԱԹ	
Տարեկան ողջ դրամիկ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԻՆԵՐ	
Տարեկան Թրակի	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN  
 Direc.-prop. du journal arménien  
 ARCHALOUICE  
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԵՒԻ  
 Եւ թղթատարի ծախքը  
 Խմբագրութեան վրայ է :  
 Խմբագրութեան ուղղուած  
 գրութիւնք եւ չ'են տրուիր  
 \*  
 Ա.Զ.Գ.ՐԱ.ԲՈՒԹԻՒՆԻՔ  
 Կանխիկ վճարելի են

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Ա.Զ.Գ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. քաժա-  
 նորդներէն ջերմասպէս կը խնդրուի որ քա-  
 ղեհաճին նախորդ տարիէն մնացեալ պար-  
 տոց կցեղով դրկել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ  
 Տարեշրջանի քաժանորդագիրը, եւ հարկ  
 չը քողոյ մասնաւոր դիմումներու, որով  
 նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ-  
 ԱՆՈՅՍԻ արդէն քազմագրաւ Տնօրինութեան :

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

Պատկերագրող Բնաշխարհիկ Բառասա-  
 նի երկրորդ պրակը հեւ ի հեւ թղթատարէ  
 ետքը սքանչացած մնացի : Ճիշտն ըսելով,  
 առաջին պրակը տեսած չ'եմ, բայց ն'ը-  
 կայս թէ՛ առաջնոյն և թէ՛ յետիններուն  
 վրայ կարող է նպաստաւոր գաղափար տալ  
 մեզի :

Վենետիոյ Միթիթարեան Վեր. Հարք  
 իրենց սոյն ստուար գործերով յաջողեցան  
 մեզի ապացուցանելու որ իրենք ալ՝ եւրո-  
 պական տպարանատէրներու պէս՝ կրնան,  
 համեստ գումարի մը փոխարէն, ազգը հա-  
 րստացնել թէ՛ պարունակութեամբ, թէ՛  
 թղթոյն ազնուութեամբ և թէ՛ պատկերնե-  
 րուն գեղեցկութեամբ ճոխ հրատարակու-  
 թիւններով :

Այս երկրորդ պրակը, որ 160 երկսիւն  
 էջերէ կը բաղկանայ, Անաւորու բառին շա-  
 րունակութեամբ կ'սկսի և Արտաշատի վրայ  
 տեղեկութիւնները չ'վերջացուցած կը վեր-  
 ջանայ : Այդ 160 էջերուն իւրաքանչիւր  
 պարբերութիւնը, և նոյն իսկ իւրաքանչիւր  
 բառը մէջ մէկ նորութիւն կամ մէջ մէկ վեր-  
 յուշում կը ներկայացնէ Հայկական սիրտե-  
 րու : Մանաւանդ գաւառացիք, անոնք որ  
 երկայն տարիներէ ի վեր պանդխտած են  
 օտար աշխարհ, յուզեալ սրտով և արտօս-  
 րակաթ աչքերով պիտի կարգան իրենց ման-  
 կական զբօսավայրերու նկարագրութիւնը,  
 աչքերուն առջև տեսնելով այն վայրերէն  
 շատերուն պատկերները : Այսօր ալեզարդ  
 ծնողներ՝ իրենց սենեկէն առանց դուրս ել-  
 լելու՝ պիտի կրնան վերստին այցելել այն  
 ուխտատեղիները, ուր կը վազէին պաշտելի  
 միամտութեամբ և հաւատացեալի սրտա-  
 բուղիս ջերմեռանդութեամբ կեանքի այլև-  
 այլ պարագաներու մէջ : Երիտասարդներն  
 ալ, այն աւերակաց կոյտերուն մէջ՝ զոր  
 յստակօրէն պատկերացած պիտի գտնեն այն

պրակին մէջ, թերևս պիտի կրնան որոշել  
 և ճանչնալ ծառի կոճղ մը, կիսաւեր կա-  
 մար մը, հայկական ամբողջ մաս մը, Ժայռ  
 մը, որ իրենց սիրտերը պիտի թրթռացնէ  
 անմոռանալի անցեալի մը յուշով :

Պրակիս մէջ մասնաւոր յիշատակու-  
 թեան արժանի են Անի քաղաքին և աւե-  
 րակաց վրայ հմտալից տեղեկութիւնք, ու-  
 ընք 30 էջ գրուած են 30 պատկերներով :

Աշտարակ, Անկիարիս (Էնգարէ) Աստրա-  
 խան, Արմաւիր լափուելիք գրութիւններ  
 են : Անգղիոյ և Հայոց մէջ եղած յարաբե-  
 րութիւնք ալ իրենց շահեկանութիւնն ու-  
 նին :

Անկարելի է պրակիս պարունակութեան  
 վրայ մանրամասն տեղեկացնել ընթացողը,  
 կը բաւականանամ միայն յայտնելով այն  
 կարծիքը թէ գործոյս ամբողջութիւնով  
 ամբողջ մեր հայրենիքը պիտի ունենանք  
 մեր յարկին տակ :

Թերևս թղթատարական մի քմահաճոյ-  
 քով գեռ նոր ստացանք Բագրատիայի հոկո-  
 նոյեմ. ամիսներուն միացեալ պրակը :

Թերթիս ծաւալը չ'ներբեր բովանդա-  
 կութեան վրայ գէթ հարեանցի գաղափար  
 մը տալ : Կը նշանակեմ միայն իմբագրա-  
 կանը, որ ուշագրաւ է մի քանի տեսակետ-  
 ներով : Հրաշալեաց սիրահարներուն կը  
 յանձնարարեմ գիտութեան յատկացուած մա-  
 սը . իսկ անոնք որ անկարելի կը համարին՝  
 երբեմն վիպաբաններու կողմէն հնարուած  
 կացութիւնները, թող կալդան Չինական  
 խնդրոյն վրայ գրուած իրականութիւնները  
 և ալ աներկբայ պիտի ըլլան որ կեանքի  
 պայքարին մէջ կան պատահարներ, որոնք  
 կը նսեմայնեն վիպաբաններուն ամենայնա-  
 դուզն կարծուած յղացումները :

Մշակի 198 թուոյն մէջ կարևոր տեղ  
 մը կը գրուէ Պարսից Շահին այցելութիւնն  
 յ'Էջմիածին, և նոյնին Վեհափառութեանց  
 Հայոց Կաթողիկոսին և Պարսկական Ինքնա-  
 կալին յարաբերութիւնքը : Իարձեալ նոյն  
 թուոյն մէջ իր կարևորութիւնն ունի մի ըն-  
 դարձակ գրութիւն քահանայական խնդրոց  
 վրայ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԻ

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԽՈՍՐՈՎՈՒՅԻ ՄԷՐՃԱՆ-  
 ՃԵԱՆ . ՏԻԱՐ ՌՕՏՈՒՅ ՄԷՐՃԱՆՃԵԱՆ . ՏԷՐ

ԵՒ ՏԻԿԻՆ ԳԱՌՆԻԿ ՄԷՇՏՈՒՏՃԵԱՆ . ՏԷՐ  
 ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱԿՈՒ ՌՍԿԱՆ . ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ  
 ՄԿՐՏԻՉ ՇԱԼՃԵԱՆ . ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՌՕՅԻԿ  
 ՊԷՐՊԷՐԵԱՆ . ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԲՕՏԻՆԱ ՓԱ-  
 ՓԱՉԵԱՆ ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԻՀՐԱՆՈՒՅԻ ԿԻՐ-  
 ՃԵԱՆ ԵՒ Համայն ազգականք , կը փութան  
 ԱՐՇԱՆՈՅՍԻ միջոցաւ իրենց խորին շնորհա-  
 կալիքը յայտնել ամեն անոնց՝ որոնք բա-  
 րեհաճեցան ամսոյս 21 ին Զորեքշարթի օր  
 ներկայ գտնուիլ :

ՏԻԱՐ ԱՏԵՓԱՆ ՄԷՐՃԱՆՃԵԱՆԻ

յուզարկաւորութեան հանդիսին , և իրենց  
 ցաւակցական զգացումներն արտայայտել  
 հանգուցելոյն կողակցին , հօր , աներոջ ,  
 քեռայրին և բոլոր ազգականներուն :

ՔՆՆԱԴՍԱԿԱՆ

ԹՈՒՐԳԻՆԱ 1876 ԷՆ Ի ՎԵՐ

ՏԵՏՐԱԿԻՆ ԱՌԹԻԻ

ՀԵՂԻՆԱԿ Ս . ՓԱՓԱՉԵԱՆ

(Շարն . նախորդ թիւէն եւ վերջ)

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ . Երես 12, Հատ 7 .  
 Թուրքիոյ երկրագործութեան համար հեղինակին  
 գծած քանի մը տողերն ցոյց կուտան թէ կամ  
 ա՛յն է որ հեղինակն բոլորովին տգէտ է մշակ  
 ժողովրդեան կացութեան նկատմամբ եւ կամ  
 ա՛յն է որ Պր. հեղինակն կը ժպտի Ասիական  
 թուրքիոյ մշակ ժողովրդեան երջանկութեան նա-  
 վար իւր հաղուագիւտ վեհապետին իրատեսներն  
 ու ֆերմաններն ի մէջ բերելով՝ քանի որ ամ-  
 բողջ այդ ընդարձակ գաւառներու մէջ ամենէն  
 հարստահարեալ, ամենէն ճնշեալ, ամենէն ազ-  
 քատ, յետինն ամենայնպէս թշուառութեան  
 մատնուած դասակարգը մշակացն է այն, աւա՛ղ,  
 այսինքն այն ստուար ու հոծ բազմութիւնը որ  
 մերկ ու բոպիկ ի ծագել արեւուն մինչեւ ի մու-  
 տըս արեւու քրտնաթոր, բազմազատակ, չա-  
 քաշար եւ հեւ ի հեւ կ'աշխատի, կը տքնի օրն  
 ի բունն՝ եւ ինք՝ այդ մշակ ժողովրդը որ ամե-  
 նէն աւելի իրաւունք ունի բնութեան դէմ պա-  
 տապարուելու, սիրտը զուարթ եւ փորը կուշա  
 պահելու՝ մի՛շտ անօթի է, մի՛շտ անսուղ, մերկ  
 ու անպատապար . ո՛չ ապահովութիւն ունի իւր  
 մշակածին վրայ՝ մինչ իւր հունձքը կը գող-  
 նան իւր արտէն . ո՛չ ապահովութիւն ունի իւր  
 գործիքներուն զոր կը հաւաքեն տուրքի տեղ,  
 ո՛չ ալ իւր կնոջ եւ գաւկին՝ զոր կը լլկեն իւր  
 առջև, եւ ո՛չ իսկ իւր գուռերն զոր իրմէ յա-  
 փշտակելով կը տանին . . . :

Պրուսայի, Սելանիկի եւ Էնկիւրիի տիպար  
 ազարակներն՝ զոր կը յիշէ հեղինակն հեզու-  
 թիւն չե՛ն կազմեր արդեօք Անատոլիոյ այն ա-  
 մայացան ընդարձակ դաշտերուն հետ :

ՓՊՄԱՆԱԿԵ ՊԲԱՍ Է

Փաթեթի տասանորդին շնորհումն ու երկրագործական գործիներու մաքսէ ազատ կացուցման իրատէսներն հեղինակութիւն չեն, երբ գործնականին մէջ ժողովուրդը կը հեծէ տուրքերու բնական տակ եւ երկրագործական գործիներն կը մաքրեն յետամնաց տուրքերու հաշիւը :

Ի՞նչ կ'արժէ ֆիզիկոսներէն հողագործութիւնը պաշտպանելու զգուշական միջոցներ հաստատող օրէնքներն՝ երբ ինքն, հողագործ ժողովուրդը՝ մարդկային ֆիզիկոսներու, անօրէն քիւրտերու եւ պաշխպարակներու վայրենի յարձակմանց ենթարկուած է :

Տասանորդի տրոց հաւաքման գրութիւնը խիստ մեծ հարստահարութեան դուռ բացած է, թողունք հայր՝ այսօր թուրք մշակն իսկ շատ տեղեր ստիպուած է իր հողերը անհերկ պահելու, որովհետեւ անկէ առնելիք հունձքը չ'բաւեր տասանորդի տուրքը գոցելու : Այս տրոց հաւաքման առթիւ պաշտօնէից գործած խժըժութիւնները անհամար են : Ի՞նչ արժէք ունին՝ յաշտ օտարաց ժողովրդասէր երեւնալու համար սուած իրատէսներն, մաքսէ ազատ կացուցանելու զիւրութեանց մասին, քանի որ երբ ինք՝ Սուլթանը, միւս կողմէն կը բաճնայ ամեն զիւրութիւն, գաւառներու ամենէն արգասաբեր հողերը այլեւայլ պատրուակներով անհասներու ձեռքէն անիրաւարար կը յարկառակէ եւ իւր անձնական գանձուն կը սեպակալանէ, ա՛յն գանձը՝ որ այսօր ամբողջ տէրութեան հասոյթին մէկ քառորդէն աւելի գումար մը կը բերէ տարին իր կեղեքիչ տերոջ :

Գաւառաց մէջ երկրագործական գրամատան հաստատութիւնը ուրիշ բան չ'նշանակեր բայց եթէ նոր պաշտօնական պատուհաս մը մը շակաց գլխուն՝ ուր ապահովութիւն կը պակսի. իրօք ապահովութիւն գտնուած տեղը այդպիսի հաստատութիւն մը օգուտներ միայն կրնայ արտադրել՝ բայց ուր որ ապահովութիւն կը պակսի, պէտք է ընդունիլ մեր վարդապետութիւնը. - եւ ահա թէ ինչո՞ւ. — Երբ մշակ ժողովուրդը ո՛ր եւ է փոխառութիւն մը կ'ընէ փոխարէնը գրաւ կուտայ իւր հողն, արդ՛ էքը հողագործն հարստութեանց եւ տուրքերու երեսէն անկարող կ'ըլլայ հատուցանելու իւր պարտքը՝ դըրամատունը ամեն առանձնաշնորհ կը վայելէ պետական օրինօք ստանալու իւր իրաւունքն վաճառամբ հողերու, եւ այս՝ աշխարհիս ամենէն դիւրին եղանակաւ, ի շնորհս ա՛յն գրութեանց զորս գրամատունը կը վայելէ յատուկ իրատէսով առանց օրինական երկար բարակ ձեւակերպութեանց եւն : Երբ մարդ ենթարկուած է գողերու եւ աւազակաց, ամենէն ապահով բանը գոյք, կողոպուտի առարկայ եւլն չ'ունենալն է, սպա թէ ոչ այսպիսի փոխառութիւններն ալ կը գտնան կ'ըլլան ճնշման նոր միջոց մը :

ՃԱՄՍԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ . Երես 13, Հատ . 8 Այս հաստուածի մէջ հեղինակն կ'ըսէ, « թուրքիայ որ մեքենական եւ ձեռագործ ճարտարութեան մէջ եւրոպական մի քանի երկիրներէ թէեւ ստոր աստիճանի մէջ կը գտնուի, սակայն ինչ ինչ ձեռագործներու մէջ կը պահէ իւր ժառանգական գերակայութիւնը : »

Եւ միշտ Ուշագի գործերը, Պրուսայի մետաքսեղէնները՝ Մանիսայի գունաւոր կտաւեղէնները եւ մշտնջենական նարկիլիներն են իւր փառապանծ փաստերը :

Գալով թէ 1876 էն ի վեր ի՞նչ յառաջիմութիւն եղեր է. — Երեք աստիճան միտալներ հաստատուել են եղեր. « ոսկի, արծաթ եւ պղինձ » է՛ն սակէ աւելի փայլուն ապացոյց կ'ուզէ՞ք երկիրն յառաջիմութեանը համար. կ'ուզէ՞ք աւելին, ահա ձեզ թուական ապացոյցները. — թուրքիոյ մէջ 1750 գործարան կայ եղեր. որոց մէջ են ֆէսի եւն . ի գործարանները, եւ սակայն թուրքիոյ ժողովրդեան հարիւրին ութսուն զեռ եւրոպայի ֆէս կը գնեն. ֆէսը, գո՛նէ այդ զուտ թըքական տարազը կարող ըլլային գուրսէն բերել չ'տարու. եւ աւելին կայ, այդ թուոյն մէջ չ'են ջաղացքները եւ աշխատանոցները (խանութիւններ՝ ուր կը գործեն) որոց թիւը վաթսուն հազարը կ'անցնի եղեր. է՛ն, կը բաւէ. ծիծաղէ զատ ուրիշ պատասխան չ'արժէր ատոր :

ՍՓԻՆՔՍ

Անգղիերէն լեզուի ծանօթ ուսուցիչ Գառնիկ Էֆ . Սիրուեան գոհացում տալու համար շատ մը երիտասարդաց փափաքին՝ Էօլպէքիյէ Մօնթէ Բառլօ Պօտէկայի ճիշտ դէմը իւր տան մէջ Անգղիերէն լեզուի դասեր տալ սկսած է :

Նորագոյն մէթոտով կ'ուսուցանէ միւս միայն ՎեՅ ԱՄՍՈՒԱՆ կարճ ժամանակամիջոցի մէջ լաւ կարգալ, գրել և խօսիլ սոյն ամենակարևոր լեզուն :

Ամեն օր երեկոյին ժամը 5 էն վերջը կը գտնուի իր տունը, ուր կրնան դիմել նաև անգղիերէն աղբրագիր ևն . գրել տալու պէտք ունեցողները :

Փափաքողաց տուները այցելութեամբ դասախօսելու պատրաստ է :

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա .

« Նոր Օր » յի 47 և 48 թիւերը իմ վերաս կը գնեն մի քանի պարտականութիւններ, որոց կատարման մէջ թերանալ հաճելի չ'պիտի ըլլայ թերևս զիս ճանչցողներուն . հետևաբար ներկայ գրութիւնս պիտի սկսէի հրապարակաւ արտայայտելով իմ անկեղծ շնորհակալութիւններս առ Պ . թ . Պատուեաճեան, անգուղական և ծերունազարդ ներկայացուցիչ հայ թատերական բեմին, համերաշխական և ընկերակցական այն գործին համար, զոր կատարեց զիջանելով հրաժարել իր կազմակերպած ներկայացումներէն, ի նկատի առնելով իր արհեստակից Տիար ՊէՆԼԵԱՆԻ տաժանելի հիւանդութիւնը և դժուար կացութիւնը, որոնք մեր թշուառասէր աղքայիներուն առջև պարզուեցան իմ կողմէս ԱՐՇԱԼՈՅՍԻ 124րդ թիւով . բայց . . . և եւ ճշմարտութիւնը յարգելու և միևնոյն ժամանակ յաւակնոտութեամբ փրցած չ'ըլլալս յայտնելու համար խոնարհաբար կը խոստովանիմ որ իմ երկտող թերևս ապարդիւն մնար եթէ երկու օր ետքը « Նոր Օր » ի մէջ լոյս չ'տեսներ ՁՆՆՈՂԻՆ յօդուածը, որով Պ . Յօդուածագիրը ուրիշ բան չ'էր ընէր բայց միայն՝ աւելի մեղմօրէն կրկնել ինչ որ ես ըսած էի : Բայց և այնպէս, եթէ հաւատք ընծայենք Պ . Պատուեաճեանի յայտարարութեան — կասկածելու պատճառ ունիմ — յաղթանակը տարաւ Պ . ՁՆՆՈՂ : Ուստի թող այն Պարոնն ալ ընդունի իմ սրտաբուլի շնորհակալութիւններս, նախ՝ վասնզի բարեգործութեան մը սատարեց. երկրորդ՝ վասնզի փորձով հաստատած պիտի ըլլար ճշմարտութիւնը այն թուրքերէն առածին թէ « թաթլը սէօզ երլանը տէլիքտէն չըգարը » բայց . . . :

Պ . Պատուեաճեան իր զիջումը վեհանձնօրէն յայտարարելէն ետքը կանցնի իր և Տիար ՊէՆԼԵԱՆԻ մէջ եղած ներքին յարաբերութեանց պատմականին . յարաբերութիւնք՝ որոցմով զբաղիլ չեմ ուզեր : Եթէ Տ . ՊէՆԼԵԱՆԻ որ և է գումար մը ( սանկ 35 ղուրուշի չափ ) կը պարտի յիշեալ բաղմաշխատ դերասանին, պէտք է որ համաձայնութեան մը յանդի իր պահանջատիրոջ հետ. իսկ թէ՛ Պազար-Մուրուրի « Սրճարան-ըն-

թերցատան » և թէ՛ « միջնորդի » դեր կատարող երիտասարդները կրնան՝ եթէ ուզեն՝ պատասխանել իրենց եղած ակնարկութեանց : Ես կ'անցնիմ խնդրոյն հոգեբանական մասին, որ աննպաստ երևոյթ մը ունի Պ . Պատուեաճեանին համար :

Մարդ մը երբ զոհոյութիւն մը կ'ընէ և զայն կը յայտարարէ ի ձայն փողոյ և թմբակի, պէտք է գործածէ այնպիսի լեզու մը, որ հեռացնէ ամեն փոքրողիւթիւն : Պ . Պատուեաճեան այսպէս չ'ընէր, այլ կը բռնէ ընթացք մը որ ո՛չ միայն կը կորսնցընէ իր զոհոյութեան արժէքը այլ նաև զայն կը ներկայէ իւր բռնադատեալ արարք մը երբէք արժանի եղած չ'է զոհողութիւն յորջորջուելու :

Սրդ, այնպիսի մէջ բռնադատեալ արարք մը երբէք արժանի եղած չ'է զոհողութիւն յորջորջուելու :

Տիար արթիտ կը յիշէ « վաթսուն գահկանի գումար մը որ որբերուն ընկերութեան պիտի յանձնուէր ՊէՆԼԵԱՆԻՆԵՐՈՒՆ կողմէն, և կ'ըսէ « չ'եմ դիտեր թէ յանձնուեցա՞ւ թէ ո՛չ, սակէց հինգ ամիս առաջ չ'յանձնուիլը դիտեմ : »

Եթէ ՊէՆԼԵԱՆԻՆԵՐԸ հինգ ամիսէն ի վեր չ'յանձնեցին այդ գումարը, անարդարանալի են : Բայց այս պարբերութիւնը բոլորովին անտեղի է Պ . Պատուեաճեանի գրութեան մէջ : Ատիկա ՊէՆԼԵԱՆԻՆԵՐՈՒ զնասելու միակ նպատակաւ մէջ բերուած է :

Անշուշտ որբերու վերաբերեալ հարց մը ամենամեծ շահեկանութիւնն ունի ազգայնոց համար, բայց առ այժմ ատի մեզ զբաղող խնդիրէն դուրս է : Մենք՝ « զննող » և ես՝ այն գաղափարը յայտնեցինք թէ՛ արհեստաւոր մը կը պարտի օգնել իր արհեստակցին . Պ . Պատուեաճեան մեզի համաժող գտնուեցաւ և յայտարարեց թէ ինքզինքը կը զոհէ իր « սիրելի արհեստակցին սիրոյն համար » . բայց գործը խօսքին չ'համապատասխաներ, ինչպէս որ տեսանք : Ասկէ զատ քանի որ հինգ ամիսէ ի վեր տեղիութիւն չ'է առած յիշեալ վաթսուն գահկանի վերջաւորութեան վրայ, պէտք էր նախ տեղեկանալ և յետոյ գրել : Առանց այս պարզ և բացայայտ զգուշութեան խնդիր մը մէջ բերել, պարզապէս հանրութեան գաղափարը պղտորելու թագուն նրպատակ կը նշանակէ . և այս կը բաւէ մեզի հասկցնելու որ Պ . արթիտը անկեղծ չ'է իր զգացումներուն մէջ, և ինչ որ մեզի կը ներկայացնէ իւր իր կողմէն եղած զոհոյութիւն, որի մէջ բան չ'է, բայց միայն բնական հետեանք այն համոզումին թէ ներկայ հանգամանքներու մէջ իր կազմակերպած ներկայացումները թէ իր քր. սակին պիտի վնասեն, և թէ՛ զինքը վարկաբեկ պիտի ընեն :

Ահա այս նկատումն է որ զիս հարկադրեց իմ շնորհակալութեան արտայայտութիւններս ընդհատել բայց . . . երով, որոնց կրկնութիւնը իրաւամբ զարմացուցած պիտի ըլլայ յարգոյ ընթերցողը :

Մեծանուն դերասանը հասկանալի պարծանքով մը կ'ըսէ . « քառասուն տարիներ Հայ թատերական բեմը ներկայացուցած եմ, Հայ մամուլը դրուատանօք խօսած է իմ մասին : » Ես հակառակը չ'եմ պնդեր . բայց թերևս այն երկարատեւ միջոցին մէջ ինք գտնուած չ'էր այն պարագաներու մէջ, որոնք կը ներկայանան այսօր : Ասկէ զատ քառասուն տարիներու դրուատելի արարքները անկարող են վայրկե-

նի մը մէջ գործուած ստգտանելի արարք մը կերպարանափոխելու : Ամենէն մեծ մահապարտը անմեղ է մինչև այն աղետալի ըրպէն , յորում ոճրագործ կ'ըլլայ : Կարծեմ Փիւնիկի մէջ էր որ փոխ առնելով հեղինակէ մը՝ ըսած էի թէ անհատի մը անցեալ վարքը ներկայ վարքին ո՛չ տգեղութիւնը կ'արդարացնէ , ո՛չ ալ գեղեցկութիւնը կը նսեմացնէ : Բարին միշտ բարի է , և յոռին՝ յոռի :

Գալով գրութեան այն մասին , ուր Պ . Փասուլեան անուշակի իմ անձիս վերայ կը յարձակի , դա խիստ բնական է : Անվայել գործի մը քննադատութիւնը միշտ անհաճոյ է , և քննադատողը՝ ով որ ալ ըլլայ՝ իբրև մարդոց յետինը կը նկատուի քննադատողի կողմէն : Այսու հանդերձ մեր համբաւաւոր արթիսոգը կրնայ վստահ ըլլալ որ ես երբէք յաւակնութիւն ունեցած չ'եմ՝ դրագիտութեան , և չափս գիտեմ : Չ'եմ ալ նախանձիր այն կրկնակի բաղդաւոր « զննող » ին որ առաջին անգամէն բարձր գնահատումին արժանացաւ թէ՛ իրեն և թէ՛ « Նոր-Օրի տաղանդաւոր , քաջահմուտ և բազմաբեղուն վարիչին . . . » Գերբերջանի՛կ « զննող » :

Կը խնդամ միայն , վասնզի այն միջոցին սուղիտ մը կը նշմարեմ Պ . Փասուլեանի ետեւը : Գրութեան այս մասին խել մը բառերը , ինչպէս և « Մրճարան-Ընթերցասուն » բառերը և ուրիշներ պարզապէս սուղիտ եղած են մեր ալեղարդ բարեկամին , որ զանոնք արձագանգած է միստրօնէն :

Ուստի ձգելով այլևս Պ . Փասուլեանին իր գործին , դառնանք գերակատար ուրիշ անձնաւորութեան մը :

Պ .

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՏԵՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ շատ յուզուած էին Լուիսի Կալէանի անուն Իտալացոյն ոստիկանութեան կողմէն ձերբակալուելուն համար : Այս Իտալացին , որ եղիպտոս ապաւինած անիշխանական մ'ըլլալ կը կարծուի , ձերբակալուած և բանտարկուած էր :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Տ Ա Ր Օ Ր Ի Ն Ա Կ Մ Ր Յ Ո Ւ Մ Մ Ը (ԻՐԱՎԷՊ)

Իրաւունք ունիք ըսաւ Շարլ Մօրթ , հեծելանիւնի երեւան գալը , երկար ատենէ ի վեր տեղի ունեցած մեծ դէպքերէն մին է , գանդաղ կենդանին՝ որ էր մարդը , արագ կենդանիի մը փոխուեցաւ , այսպէս դէպքի մը հասողութիւնը անհաշուելի է :

Տասնութը ամիս առաջ , իր ամբողջութեանը մէջ այս զօրաւոր կերպարանափոխման զգացումը ունեցայ այնպիսի յուզիչ պարագայի մը մէջ , որուն յիշատակը շուտով մարդուս մտքէն չ'ելլար :

Գիտէք որ այն ժամանակ Մալեան կողմէն մէջ կը ճամբորդէի Սուամթրայի եւ ձաւաի մէջ , Հօլանտացի Մօէր աշխարհագիրին եւ մեր երկրաբան Ռուսէլի հետ :

Իրիկուն մը ցամաք ելանք նոր գաղթականութիւն հաստատուած ու մշակուած նախկին հոյսի մօտ , տասնի չափ Հոլանտացի գաղթականներ հոն կը բնակէին , որոնց կը ծառայէր բոլոր Մալացի եւ Չինացի ազգաբնակիչները : Մշակավայրերը շատ ընդարձակ են , երկու քառակուսի մղոնի չափ և անագին կոյս անտառի

իտալական կառավարութեան դիմումով : Թերթերը միաձայն քննադատեցին եղիպտական կառավարութեան այս արարքը , զոր կը գտնէին հակասական միջազգային օրինաց , մանաւանդ այնպիսի երկրի մը մէջ , ուր « մահուան դատապարտուած երիտասարդ թուրքեր արձակ համարձակ կը պատրտին » : Մամլոյ այս համերաշխութիւնը իր բնական արդիւնքն ունեցաւ և իտալացին ազատ արձակուեցաւ :

ՀԱՅ ԳԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ որ ի Գահրէ , վաղը երեկոյ պիտի ներկայացնէ ԹԸՐ-ՔՈՒՀԻՆ ի նպատակ հիւանդագին Տիար . Ե . Պէնլեանի :

Այս առթիւ Պէնլեան ընտանիքը և գերասանական խումբը Խմբագրութեանս վրայ պարտք կը դնեն յայտարարելու որ չնորհիւ այն սիրալիր համակրութեան , զոր Յարգոյ Հանրութիւնը հաճեցաւ շնորհել , իրենց վաղուան ներկայացումը արտասովոր փայլ մը պիտի ստանայ պատուաբեր ներկայութեամբ ամեն դասակարգի ազգայնոց : Խմբագրութիւնս մեծ ուրախութեամբ կը լսէ , որ ուղղուած տոմսակներուն ամենքն ընդունուած են , և կը մասնակցի այն անկեղծ շնորհակալութեան՝ զոր յիշեալ ընտանիքն ու խումբը կանխաւ կ'արտայայտեն իրաւամբ՝ առ ազգասէր Հայ գաղութին Գահրէի :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

— 0 —

Լոնտոն 22 նոյեմ . — Ականատես վկաներ կը պատմեն որ զազմանքը մինչև վերջին Չինացին հեռացուցին Ամուր գետին եզերքներէն :

Լոնտոն 22 նոյեմ . — Լօրտ Ռօպրթսի ձին ինկաւ անցած կիրակի : Չօրապետը բաւական ցնցուեցաւ բայց չ'վիրաւորուեցաւ : Պօէրները մեծ կորուստով ետ մղուեցան Պարպէրսանէն :

Մարտի 22 նոյեմ . — Պ . Քրիկէր այս առաւօտ ժամը 11ին ցամաք ելաւ ընդհանուր խանդավառութեան մը մէջ : Հեռագրեց նախագահ Լուպէյին շնորհակալութիւն յայտնելով այն սիրալիր համակրու-

մը մէջ լոյսի ծակ մը կը փորեն կարծես , բուն դիւղը ամբացուած է վագրերուն յարձակման դէմ որոնք 1811 ին և 1853 ին երկու անգամ յարձակեցան այն ժամանակուան Մալացիի գաղթականներուն վրայ և զանոնք լաիեցին :

Մայիսի 22 նոյեմ . — Պ . Քրիկէր այնպիսի անհաշուելի անախի հիւրընկալութիւն մը գտանք . իր փայտաչէն դղեակին տանիքին վրայ վայելեցինք այն երեկոյներէն մին ուր իրար կը խառնուին անուշաբոյր մթութիւնը , կայծոռիկներուն լոյսը , և աստղերուն սքանչելի ընթացքը :

— Վագրերը երբեմն մարդ կը յափշտակեն , հարցուցի մեր հիւրընկալին , որսական զրոյցներու միջոցին :

— Ո՛չ այնչափ յաճախ , տասը տարուան մէջ գուցէ 3 կամ 4 հատ , բայց հիմա ալ յարձակիլ չ'են փորձեր , որովհետեւ լաւ դասեր առած են մեզմէ :

— Սակայն հոս վագր շատ կայ , այնպէս չէ՞ : — Այո՛ , անտառը լեփեցուցն է , նոյն իսկ ցորեկ ատեն , անտառին եղերքներուն քով շՆՐ-Չագայութիւն մը շատ յանձնարարելի չ'է :

Քիչ մ'ալ կեցանք սուրճերնիս խմելու կապոյտ կանթիղներու լոյսով , որք գիշերուան վրայ նուաղկոտ լոյս մը կը սփռէին . ապա գացինք հանգստանալու :

Հետեւեալ առաւօտ երբ արթնցայ , տանտէրը կանուխկեկ դաշտ գացած էր , թաս մը թէյ

թեան համար զոր ֆրանսական կառավարութիւնը կը ցուցնէ Պօէրներուն :

Պ . Քրիկէր կը յայտարարէ թէ իրաւունքը պիտի յաղթանակէ :

Լոնտոն 22 նոյեմ . — Ն . Կ . Վեհափառութիւն Չարը , լաւ անցուց երեկուան օրը , բայց գիշերը անհանգիստ եղաւ :

Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Կ . Ս Ա Ր Ա Ս Ե Ա Ն

Գ Ե Ր Չ Ա Կ Ա Ր Ա Ն Ե Ի Կ Ա Ն Ա Ն Ծ

Շարա Պոպ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - դերձակ ԺՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելապէս հմուտ եւ փորձառու , այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրաին դիմացը , նորաչէն խառնութիւնըն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յաճախորդը ըստ ամենայնի գոհ պիտի մնան , արհեստի նրբութիւն տեսնելով , նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով , և մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է , չափաւոր վճարումներու փոխան , ձեւաւոր եւ ճաշակաւոր զրեստներ ունենալով :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Ռուսահայ հարուստ մը , Կրասիլնիկեան , 22000 ռուբլի գնած է Մուրճ-ամսաթերթը , որ պարտքերու տակ ծանրաբեռնուած էր , ու կաղնիկաղ կը հրատարակուէր ցարդ՝ հիմնադիր Պ . Ա . Արաս խանեանի անխոնջ կորովին շնորհիւ :

(Երանի՛ անոնց որ Գահրէի մէջ առանց վճարելու թերթի մը տիրելու յոյսը ունին) :

Բ . ԴՈՒՌԸ գոհացում տուաւ Ռուսիոյ՝ Կարինի դեր-հիւպատոսին վրայ եղած յարձակումին համար : Յանցաւորները ձերբակալուած են և պիտի պատժուին : Կողոպտուած գոյքերը ետ դարձուած են տէրերուն :

խմելէս յետոյ սկսայ բնակարանին շուրջը թափառիլ , կը վարանէի թէ՛ արդեօք շրջակայքը փոքրիկ պտոյտ մը կատարէի թէ՛ ծրար մը ճամբու նօթերս դասաւորէի , երբ յանկարծ աչքիս դպաւ սքանչելի հեծելանիւ մը որ սայլանոցի մը քով գրուած էր :

Անմիջապէս ճանչցայ Ամերիկեան համբաւաւոր գործարանի մը նշանը , հեծելանիւս Մալաքթի մօտ կատարած պտոյտի մը պահուս կոտորէլէն ի վեր հեծած չ'էի , ինչպէս որ գիտէք հեծելանիւի խեղդ հմ , պարծենալու համար չ'է , եթէ յիշեմ թէ՛ Տէնքըրի հետ մրցում մը ըրած եւ յաղթող ելած եմ :

Մեքենան տեսնելուս պէս այնպիսի անդիմադրելի փափաք մը եկաւ վրաս որք միայն ճըշմարիտ սիքլիսթները , ծխողներուն հետ կ'զգան , առաջ չ'ուզեցի , ապա կամացուկ մը ասդին քաշեցի հեծելանիւր , հեծայ , միտքս լաւ մը դնելով որ փոքրիկ պտոյտով մը բաւականանամ :

Բաւական լաւ ճանապարհ մը կը տարածուէր բնակարանին առջեւէն որ լափուած Մալալեցիներէն սկսուած եւ Հօլանտական գաղութին ձեռքով վերջացած էր : Սկսայ հեշտալիօքէն սուրալ , մրցումի պարագութեամբ : Դրսկանապէս կատարեալ հեծելանիւ մ'էր . հնազանդ , զգայուն եւ արագ :

(Շարունակելի)

Ժ . Հ . ՌՕՆԻ .

Թարգմ . ԼԵՒՈՆ

Կ. ՊՈԼՏԷՆ կը հաղորդուի .

Երևոյցի պալատը յարածուն անձկու- թեամբ կը դիտէ այն յամառութիւնը, զոր Աթէնքի Ալպանիական մասնաճիւղը ի գործ կը դնէ զէնք և ուղղամթերք ներմուծե- լու ի Մակեդոնիա : Ալպանիական ապստամ- բութենէ մը կը վայնայ Սուլթանը :

ԻԳՏԱՄ կ'իմանայ որ ահագին գաղթա- կանութիւն մը կը պատրաստուի Կաւկասի մէջ : 30,000 թուրք ընտանիք Սուլթանա- կան կառավարութենէն արտօնութիւն խնդ- րած են թուրքիոյ մէջ հաստատուելու հա- մար :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ թրքական ներկայա- ցուցիչներուն անընդհատ բողոքին վրայ, մաքային հասոյթէն վճարուեցան յետա- մնաց հինգ ամսականներ, որոնց գումարն է երկուքուկէս միլիոն ֆրանկ :

ՊիթլիՍի մօտ քիւրտերը հրդեհեցին հայ վանք մը :

ՍԵՐՊԻՈՅ թագաւորը կը փափաքի ինք- յինքը ապահովագրել մէկ միլիոն ֆրանկի համար : Ապահովագրական ընկերութիւն- ները պատասխաներ են որ Իտալիոյ Ոււմ- պերթօ թագաւորին սպաննութենէն ի վեր թագակիրներուն կեանքը չ'են ապահովեր այլևս :

ՍՈՒԱՔԻՆԻ կառավարիչը պատերազմա- կան նախարարութեան կը հեռագրէ որ մա- րաններ աւերեցին Թօքատի ամբողջ հունձ- քը :

ՄՈՀՍԻՆ Պէճ որ վերջերս Կ. Պոլսէն քաղաքս ժամանած էր մասնաւոր պաշտօ- նով մը յառաջիկայ չարթու մէջ Պօլիս կը վերադառնայ Ն. Բ. Խալիլին մէկ ինքնա- գիր նամակով՝ որ սուլթանին ուղեւալ է :

ՊԵՐԼԻՆԷՆ կ'իմացնեն Նոյեմբեր 19 թուականաւ թէ՛ Չինաց կայսրը հեռագրած է Կիյեով կայսեր, խոստանալով պատժել պարոն Վոն Գէթթէլէրի սպանիչները, և պաշտպանել քրիստոնեայ առաքելութիւն- ները ու վերադառնալ Բէքին, երբ խա- զաղութեան պայմանները կնքուին :

ԼՈՆՏՈՆԷՆ միւստի թուականաւ կը հեռագրեն թէ՛ Ալտէրսըն և Մահոն գնդա- պետները Բրէթօրիայէն մեկնեցան Եգիպ- տոս երթալու համար : Պօէրները զիմադ- րութեան բազմաթիւ կեդրոններ կազմա- կերպեցին և առատ դրամ ունին :

ՍՈՒԹԱՆԸ հրամայեց որ խիստ կանո- նաւորապէս կրկնակի ամսական վճարուի Պուլկարիոյ և Արևելեան Ռուսիայի թուրք գաղտնիքու ուսուցիչներուն : Սուլթանա- կան այս կարգադրութիւնը, կ'ըսէ Բիւրաւիս թերթը, որմէ փոխ կ'առնենք այս լուրը, ապացոյց մ'է այն հոգատարութեան զոր Խալիֆայն կը տածէ արտասահմանի թուրք գաղտնիքուն վրայ ( \* \* \* ) :

—Ըստ հեռագրոյ մը զոր ընդունած է Լօրտ Գրոմէր անգղիական գաղտնի-նաւատոր- միդի հրամանատարէն, բրիտանական սոր- միդի վեց նաւերը՝ հակառակ նախապէս ե- ղած որոշման՝ չ'պիտի կրնան Աղէքսանդրիա գալ, վասնզի Եգիպտական նաւահանգիստ- նէրէն մեկնողները գարանթիոյ պիտի են- թարկուին Կիպրոսի, Թուրքիոյ և Յունաս- տանի կառավարութեանց կողմէն : Ռու- սական նաւատորմիդն ալ չ'պիտի այցելէ Աղէքսանդրիան, միւստի պատճառներով : ՄԱՐՍԷՅԸ, Ալիսիոն, Լիօն և Տիփօն քաղաքները խանդավառութեամբ կը պատ-

րաստուն սիրալիր ընդունելութիւն մը ընե- լու համար Պ. Գրիւկէրի, զոր միշտ կը նը- կատեն նախագահ Հարաւ-Ափրիկեան Հան- րապետութեան : Պրիւքսէլէն կը հաղորդուի որ 550 ընկերութիւններու ներկայացուցիչ- ներ ներկայ պիտի գտնուին նախագահ Քը- րիւկէրի ընդունելութեան : Տասնուհինգ հա- զար ստորագրութիւն կը կրեն այն ուղերձ- ները, որոնք պիտի մատուցուին ծերունի Նախագահին :

ՄԻԻԹԱՐԵԱՆ միաբանութեան անդամ Հայր Գարրիէլ Վ. Նահապետեան նկարած է 60 հատ սքանչելի նկարներ որոնք Հաղ- բակի, Սանահինի, Էջմիածնի, Երևանի և Սանոյ մենաստանները ինչպէս նաև Արա- րատ և Արագած լեռները կը ներկայացնեն : Յարգելի Հայրը իր հետ առնենալով Հ. Սար- գիս Յովսէփեանն ու նկարիչ Պ. Ֆէթվա- ճեան, անձամբ պատեր է այդ բոլոր տեղե- րը : Հայր Նահապետեան իր պատմական նը- կարները 100 ի լեցնելէ վերջը մտադիր է պատմական ծանօթութիւններով և բացառ- րութիւններով հրատարակել միաբանու- թեան 200 ամեակի Յօրէլեանին առթիւ :

ՀՅԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 7328 6784 7084 6472 9128 1341, 4239 2191 3198 5834 7318 8621, 9488 1067 6396 6635 1681 1118, 7168 5745 7079 998 4968 9099, 8619 1649 3591

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ա Ձ Դ

Եգիպտական ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւա- սարգեան քաղաքէն մեկնած ըլլալով այժմ Եգիպտոսի համար Արևելեան Մամլոյ ներ- կայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտա՛մեան, որուն պէտք է զիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին :

Յիշեալն պատրաստ է փափաքողաց հա- մար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով : Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոք- րիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հաս- ցէին յ'Աղգ. վարժարանն ի Տորպէլ-Կի- նէնա :

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԳԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒՊ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե- նէն աւելի շահաբաժինները : Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ արխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է : Ս. ԼԻՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ՞՞

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԸ Օսկանիյե դեղատրսինի դիւնացի փողոցին մեջ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարեւակներ, Գիրքեր, Հրախապեր, Մահազրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և՛ այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտահոլութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՈՒԿ ԵՆ :

ՄԻ՛ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՅԹ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ժամացոյց- ներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ : Ինչ- պէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և ուր- սիտէ ժամացոյցներ . պատի և քօնսօրի բազ- մազան Բանտիլներ և ամեն ճաշակի յար- մար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Թօ- նօկրաֆներու :

Ա. ՊԱԼԵԱՆ Մ Ա Թ Ի Լ Տ (Գաղթականաց կեանքէն) Գին 50 ՍԱՆԹԻՄ ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱԲԱԾՈՅ ՀԱՅՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻԶ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտ- ներու աշակցութեամբ եռաձայն և քառու- ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյին գնել փափաքողներն կամ բաժանորդագրու- ուիլ ուղղորդեն, կրնան գիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօ- րէնին :

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԳԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒՊ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ըն- կերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապո- րակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործա- կատար Ս. Աղէքսանդրիա :